ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ИНСПЕКЦИОННЫЙ
ОХРАНЫ ПРИРОДЫ
РЕСПУБЛИКИ АРМ
ЗАМЕСТИТЕЛЬ РУКОВ
ENVIRONMENTAL PROTECTI
INSPECTION BO
OF THE REPUBLIC OF
THE DEPUTY HE

№_____

«_____» _____ 2021թ.

Շրջակա միջավայրի
նախարարի տեղակալ
Ա. Մազմանյանին

Հարգելի տիկին Մազմանյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 3/16.4/10446 և 2021 թվականի օգոստոսի 26-ի թիվ 3/16.9/10696 գրությունների հայտնում եմ, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Շրջակա միջավայրի նախարարության և Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ներկայացուցիչներից կազմված մասնագիտական խումբը 2021 թվականի հուլիսի 28-ին այցելել է «Արմավիրի կենդանաբուսաբանական այգի-վայրի կենդանիների փրկարար կենտրոն», տեղում

Կորյունի փող. 15, 0009 Երևան, ՀՀ
15 Koryun Str., 0009 Yerevan, RA

Էլ.փոստ՝ vrezh.galoyan@ecoinspect.gov.am
Web page: www.ecoinspect.am

իրավիճակին ծանոթանալու համար: Ուսումնասիրվել են պահվող արջի ընդհանուր վիճակը, պահման պայմանները, կերի ռացիոնը, ազատավանդակի չափերը:

Պարզվել է, որ արջը մեծ տարիք ունի՝ 34 տարեկան է, երեք տարի առաջ կուրացել է, սակայն պատշաճ կերպով խնամվում է, վիճակը բավարար է, հյուծված չէ, նորմալ սնվում է տվյալ տեսակին բնորոշ կերով, իսկ ազատավանդակի չափերը համաձայն ՀՀ կառավարության 2009թվականի հունիսի 26-ի թիվ 725-ն որոշման, սահմանված նորմերից ավելի մեծ են, առկա է փոքր ջրավազան, ինչպես նաև կառուցվում է նոր տարածք, որտեղ կլինի մեծ ջրավազան և ավելի ընդարձակ զբոսատարածք (կցվում է արձանագրությունը):

Ինչ վերաբերում է մամուլում և սոցցանցերում տեղ գտած լրատվությանը և տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցադրումներին, ապա հայտնում եմ, որ մասնագետներ հրավիրելու և արջին տեղում հետազոտելու և բուժելու գործընթացին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Շրջակա միջավայրի նախարարության և Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի մասնագետներից կազմված մասնագիտական խումբը դեմ չէ, սակայն նախկինում արված առաջարկին՝ արջին էֆթանազիայի ենթարկելու վերաբերյալ, միանշանակ դեմ է: Հետազոտության համար արջին ժամանակավորապես քնեցնելու՝ թմրեցնելու և այլ տարածք տեղափոխելու ու բուժելու առաջարկին վերոնշյալ մասնագիտական խումբը դեմ է, քանի որ չկա երաշխիք, որ կենդանին մեծ տարիքի պատճառով, դուրս կգա թմրեցումից (նարկոզից):

Առդիր 1 նիշք:

Հարգանքով՝

X

Վ.Գալոյան

Կատարող՝ կենսաբազմազանության
վերահսկողության վարչություն
Հեռ. 015488886

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐԱՅԻՆ ՑԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԱՐ